ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Թամարա Թորոսյան

Երկքաղաքացիության ինստիտուտի հետազոտությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների համատեքստում առավել կարևորություն է ստանում, քանի որ այն հնարավորություն է տալիս օրենսդրական մակարդակով կարգավորել խնդրո առարկա ինստիտուտի հետ կապված հարցերը:

21-րդ դարում, երբ որակական փոփոխություններ են նկատվում պետությունների փոխհարաբերություններում, երբ վերարժևորվում են տարածաշրջանային և համաշխարհային նշանակության շատ գործընթացներ, նոր հարցադրումներ են առաջանում նաև մարդու իրավունքների և դրա անքակտելի մաս հանդիսացող քաղաքացիության իրավունքի ոլորտներում: Պետությունից պետություն միգրացիոն հոսքերի արագացումը, աշխարհաքաղաքական նոր միավորների ստեղծումը մեծ խնդիրների առջև են կանգնեցնում նաև այնպիսի իրավական ինստիտուտ, ինչպիսին է քաղաքացիությունը: Կեցության բերումով շատերն են հարաբերվում մեկից ավելի պետությունների հետ, ինչն առաջ է բերում քաղաքացիական պարտականությունների և իրավունքների նորովի ձևակերպման անհրաժեշտություն:

Երկքաղաքացիության ինստիտուտի ամրագրումը տարբեր երկրների հիմնարար օրենքներում 20-րդ դարի երկրորդ կեսին ունեցավ գիտական և իրավական շարունակական զարգացում՝ հանգեցնելով բազմաթիվ միջազգային կոնվենցիաների, երկկողմ և բազմակողմ պայմանագրերի առաջացման [1, էջ 14-14]: Այս առումով հատկապես մեծ նշանակություն է ստանում երկքաղաքացիության ինստիտուտի կիրառման հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հայ ժողովրդի համար երկքաղաքացիությունը պայմանավորված է համազգային առանձնահատուկ իրավիճակով, քանզի մենք ներկայացնում ենք մի ժողովուրդ, որն իր հայրենիքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կատարված ցեղասպանության հետևանքով հայտնվել է աշխարհասփյուռ իրավիճակում: Հայկական սփյուռքը համաշխարհային պատմության յուրահատուկ երևույթներից է, և հայության ներկայացուցիչներն արտերկրում տասնամյակներ շարունակ կարողացել են պահպանել ազ-

գային մշակույթն ու ինքնությունը հայրենիք վերադառնալու և անկախ պետականություն ունենալու տեսլականով: Ներկայումս անկախ հայրենիքում է ապրում հայերի 1/3-ից պակաս հատվածը: Նման իրավիճակն անխուսափելիորեն թելադրում է ազգային ինքնության միասնական դաշտի ձևավորման անհրաժեշտություն, որը կներառի սերտ գործակցություն էթնոմշակութային, լեզվական, հոգևոր, սովորութային հարցերում, կձևավորի ազգային-պատմական հիշողության վրա կառուցված միասնական պատասխանատվություն Հայրենիքի և հայության ապագայի հանդեպ:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (16.12.1966թ.) սահմանում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ազատորեն տնօրինել իր քաղաքական կարգավիճակը և ապահովել իր տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: Դա կարող է իրականացվել թե' ինքնորոշման շրջանակներում և թե' միջազգային լայն համագործակցության ճանապարհով: Ազգային ինքնության շրջանակներում գործակցության ամրապնդումը և դրա համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն իրավաչափ նպատակ են: Այն համահունչ է միջազգային իրավունքի նորմերին և բխում է Հայաստանի Անկախության մասին հռչակագրում և ՀՀ Սահմանադրության նախաբանում ամրագրված համազգային նպատակներից:

ՀՀ 1995թ. ընդունված Սահմանադրությամբ չէր նախատեսվում երկքաղաքացիություն ստանալու հնարավորությունը [2]:

Երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը ՀՀ-ում ամրագրվեց 5.12.2005թ. ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտով [3]: Սահմանադրական փոփոխությունների համատեքստում նմանատիպ ինստիտուտի առկայությունը պահանջում է օրենսդրական դաշտի փոփոխություն և դրա գործնականում իրացման իրավական առանձնահատկությունների կարգավորում:

ԱՊՀ ստեղծման մասին 1991թ. Բելովեժյան համաձայնագիրը հանդիսացավ այն եզրագիծը, որով սկիզբ դրվեց նորանկախ պետությունների հռչակման և դրանց բաղկացուցիչ ինստիտուտի քաղաքացիության հաստատման և ամրագրման գործընթացին: ԱՊՀ ստեղծման վաղ շրջանում, մեկ միասնական իրավական հարթություն պահպանելու փորձերից էր ԱՊՀ կողմից խորհրդատվական բնույթի «Քաղաքացիության կարգավորման համաձայնեցված սկզբունքների մասին» օրենսդրական ակտը, որով ճանաչվեցին քաղաքացիություն ունենալու և քաղաքացիության հարցերում խտրականության բացառման և այլ սկզբունքները: Այնուհետև ԱՊՀ շրջանակներում երկքաղաքացիության իրավական կարգավորմանն ուղղված երկկողմ համաձայնագրեր կնքվեցին, և այդ ինստիտուտը օրենսդրորեն

կարգավորելու փորձեր կատարվեցին:

Մինչ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունումը (2007թ.) մեզանում տարբեր մակարդակներում շարունակվում էին թեժ քննարկումներն ընդունվող օրենքի նախագծի բովանդակության մասին[1]: Դրանք իրենց լուծումները գտան «Քաղաքացիության մասին» օրենքի փոփոխությունների և լրացումների մասին ՀՀ օրենքում (2007թ. փետրվարի 26) [4]:

Երկքաղաքացիությունը հղի է իրավաբանորեն դժվարլուծելի հիմնախնդիրներով, քանզի խիստ դժվար է միաժամանակ իրացնել երկու պետությունների քաղաքացիությունից բխող իրավունքներն ու պարտականությունները: «Արտերկրի հայերին ՀՀ-ում երկքաղաքացիության կարգավիճակ տալու մասին» ՀՀ օրենքը հնարավորություն կընձեռի մեր հայրենակիցներին ստանալ ՀՀ քաղաքացիություն պարզեցված կարգով՝ հայկական ծագման (էթնոսի) ապացույցներ ներկայացնելով: Մեր կարծիքով, դա ոչ միայն կարող է դառնալ հայությանը Հայրենիքի շուրջ համախմբելու հիմք, այլև համահայկական ներուժի ձևավորման և ՀՀ տնտեսության զարգացման խթան:

Հարկ է նշել, որ թեև երկքաղաքացիության ինստիտուտի սահմանադրական ամրագրման հիմնապատճառը պայմանավորված է ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկի՝ արտերկրի հայերի հետ հարաբերությունների ամրապնդման երաշխիքների ապահովմամբ, այնուամենայնիվ, ՀՀ քաղաքացիները և օտարերկրացիները ևս կարող են ստանալ երկքաղաքացիություն՝ օրենսդրական կարգավորման որոշակի առանձնահատկություններով, որի օրենսդրական կարգավորումն էլ համապատասխանաբար կկատարվի «Քաղաքացիության մասին» և «Օտարերկրացիների իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով [5]:

Ըստ մեզ՝ հարկ է առաջիկայում մշակել «Երկքաղաքացիության մասին» առանձին օրենք, որի կարգավորման առարկան պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիության կարգավիճակ տալու գործընթացի կազմակերպման և դրանից բխող իրավունքների իրացման ու պարտականությունների կատարման ժամանակ առաջացող իրավահարաբերությունների կարգավորումը: Անհրաժեշտ է օրենքում նախատեսել հիմնական հասկացությունների ցանկ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքում գործածվելիք բազմաթիվ հասկացություններ ՀՀ-ում սակավ կիրառելիություն ունեն կամ էլ առհասարակ անհայտ են: Մասնավորապես,

[1] Տե՛ս *Դավիթ Հարությունյան,* Կառավարությունը սթափ է գնահատում իրավիճակը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 20 սեպտեմբերի 2006թ., թիվ 169 (4025), Двойное гражданство, «Республика Армения», 29 сентября 2006, №69 (455):

պետք է տրվի այնպիսի հիմնահասկացությունների բնորոշումը, ինչպիսիք են՝ երկքաղաքացիությունը, երկքաղաքացու կարգավիճակը, նրանց ընտրական իրավունքներն ու զինապարտության միջազգային հիմքերը, երկքաղաքացիություն շնորհող իրավասու մարմինները և այլն: Առաջարկվում են հետևյալ ձևակերպումները.

Երկքաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ պատկանելությունն այլ պետությունների քաղաքացիությանը (կամ անձը, որն օժտված է երկու կամ ավելի պետությունների քաղաքացիությամբ, կամ միևնույն անձի իրավական պատկանելությունը երկու կամ ավելի պետությունների):

Երկքաղաքացու կարգավիճակ՝ հնարավորություն է ընձեռում անձին իրավունքներ իրացնել և պարտականություններ կրել ՀՀ քաղաքացիների հետ համահավասար:

Արդյունավետ քաղաքացիություն՝ երկքաղաքացու ամուր, սերտ կապը որևէ պետության հետ, որի առջև նա իրացնում է իր իրավունքներն ու կրում հիմնական պարտավորությունները:

Երկքաղաքացու ընտրական իրավունք՝ երկքաղաքացիներն ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք՝ որոշակի նորմերի պահպանման դեպքում:

Երկքաղաքացու զինվորական պարտավորություն՝ երկքաղաքացին պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

«Երկքաղաքացիության մասին» ապագա օրենքի նպատակը երկքաղաքացիների՝ օրենքով սահմանված կարգով, իրավունքների իրացման և պարտականությունների կատարման համար լիարժեք և ՀՀ քաղաքացիների հետ համահավասար հնարավորությունների ստեղծումն է:

Երկքաղաքացիության կարգավիճակ տալու հիմնական սկզբունքներն են՝ արդարությունը, իրավահավասարությունը, խտրականության բացառումը, իրավաչափությունը:

Երկքաղաքացիության կարգավիճակ տալու խնդիրներն են՝ սփյուռքահայությանն իր ինքնության արմատներին կապելու և յուրաքանչյուրի ազգային ներուժի դրսևորման հնարավորության բացահայտումն ու պաշտպանությունը, երկքաղաքացիների իրավունքների իրացման և պարտավորությունների կատարման իրավական կարգավորումը, ինչպես նաև նշվածի համար պետական կառուցակարգի ապահովումը:

Երկքաղաքացիների կարգավիճակի մասին իրավական ակտերն են.

1. ՀՀ Սահմանադրություն (30.1 հոդ.)
2. Քաղաքացիության մասին օրենք (ենթակա է փոփոխությունների)
3. Արտերկրի հայերին ՀՀ-ում երկքաղաքացիության կարգավիճակ տա-

լու մասին օրենք կամ Երկքաղաքացիության մասին օրենք
4. Զինապարտության մասին օրենք (ենթակա է փոփոխությունների)
5. Այլընտրանքային ծառայության մասին օրենք (ենթակա է փոփոխությունների)
6. Ընտրական օրենսգիրք (ենթակա է փոփոխությունների)
7. Ընտանեկան օրենսգիրք (ենթակա է փոփոխությունների)
8. Քաղաքացիական օրենսգիրք (ենթակա է փոփոխությունների)
9. Քրեական օրենսգիրք (ենթակա է փոփոխությունների):

Օրենքը հստակորեն պետք է սահմանի երկքաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները (ընտրական իրավունքները, զինապարտությունն ու հարկային պարտավորությունները):

Նախ, նշենք այն, որ երկքաղաքացիները տվյալ պետության քաղաքացիներին համահավասար ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են Ազգությունների մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից (17-րդ հոդվածի 1-ին կետ, ԵԽ), համաձայն որի՝ որևէ պետության տարածքում բնակվող երկքաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ *(inter alia,* անձնական, սոցիալ-տնտեսական և մշակութային) տվյալ պետության քաղաքացիների հետ, և Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայից, համաձայն որի՝ այլ պետության քաղաքացիություն ունեցող քաղաքացիները մյուս պետության տարածքում, որտեղ բնակվում են, օժտված են նույն իրավունքներով և կրում են նույն պարտականությունները, ինչ և տվյալ պետության քաղաքացիները: Սա նշանակում է, որ ՀՀ-ն ուղղակի պարտավորություն է ստանձնում կատարել վերոհիշյալ դրույթների պահանջները, սակայն այդ իրավունքներն ու պարտավորությունները կյանքի կկոչվեն ՀՀ-ում երկքաղաքացիների համար՝ միայն բնակություն (առավելապես, թե մշտապես) հաստատելուց հետո, այլապես նրանց կշնորհվի ուղղակի երկրորդ քաղաքացիություն (երկրորդ անձնագրի առկայությամբ և յուրաքանչյուր պետության կողմից կդիտվի միայն որպես իր քաղաքացի): Ազգությունների մասին եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածի 2-րդ կետում մատնանշվում են այն դեպքերը, երբ չի կիրառվում հավասարությունը: Դրանք են՝ անդամ պետության կողմից իր քաղաքացու նկատմամբ, որը միևնույն ժամանակ հանդիսանում է նաև այլ երկրի քաղաքացի, դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանության մասին միջազգային իրավունքի դրույթների կիրառումը, ինչպես նաև միջազգային, մասնավոր իրավունքի դրույթների կիրառումը բազմաքաղաքացիության դեպքում:

Երկքաղաքացիների իրավունքների և պարտականությունների իրա-

վական կարգավորումն ունի որոշակի առանձնահատկություններ, նրանց իրավունքների և պարտականությունների համաձայնեցման և իրավական կարգավորման վերաբերյալ պետությունները կարող են կնքել երկկողմ միջպետական համաձայնագիր: Այնուամենայնիվ, միջազգային բազմակողմ պայմանագրերից (այս մասին են վկայում 1930թ. Երկքաղաքացիության որոշ դեպքերում զինվորական ծառայության մասին Արձանագրությունը, 1963թ. Երկքաղաքացիության դեպքերի թվի և երկքաղաքացիության դեպքերում զինապարտության կրճատման մասին կոնվենցիան, 1997թ. Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան և այլ միջազգային իրավական ակտեր) բխող հիմնական սկզբունքները, օրինակ՝ երկքաղաքացիների զինապարտության կարգավորման հետ կապված հիմնահարցերը նկատի ունենալով՝ կարելի է կատարել հետևյալ սահմանումները.

1. Երկքաղաքացիները զինապարտությունը պետք է կրեն մշտական բնակության պետությունում: Այնուամենայնիվ, մինչև 19 տարին լրանալը նրանք կարող են մյուս քաղաքացիության պետությունում, որպես կամավորական, զինապարտություն կրել այն ժամկետին համարժեք, որը հավասար է իրենց մշտական բնակության պետությունում սահմանված ծառայության ժամկետին: Փաստորեն, պետությունները համաձայնվում են, որ երկքաղաքացին զորակոչվի այն երկրում, որտեղ նա մինչ զորակոչի տարիքը մշտապես բնակվում է, ինչը նրան ազատում է զինապարտությունից այլ երկրում, որի քաղաքացին նա նույնպես հանդիսանում է: Որոշ դեպքերում նման երկքաղաքացի-զորակոչիկին ընտրության հնարավորություն է տրվում:.
2. Անձինք, ովքեր մշտապես բնակվում են միջպետական պայմանագրի մասնակից պետության տարածքում և չեն հանդիսանում նրա քաղաքացիները, կամ այն պետության տարածքում, որը չի հանդիսանում նշված պայմանագրի մասնակից պետություն, կարող են զինապարտությունն իրենց կամահայտնությամբ կրել ցանկացած մասնակից պետության տարածքում, որի քաղաքացիներն իրենք հանդիսանում են:
3. Վերջին դեպքում, նշված կանոնների համաձայն, զինապարտությունը կատարած անձինք համարվում են իրենց զինապարտությունը կատարած պայմանագրի ցանկացած մասնակից պետության նկատմամբ:
4. Անձինք, ովքեր մինչև քաղաքացիության հարցերով միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելը կրել են զինապարտություն, համարվում են մյուս պետության նկատմամբ զինապարտությունը կատարած:
5. Եթե մշտական բնակության վայրում (որի քաղաքացիներն այդ անձինք հանդիսանում են) երկքաղաքացիները կատարել են զինապարտությունը և այնուհետև մշտական բնակություն են հաստատել իրենց

քաղաքացիության այլ պետությունում, ենթակա են զինվորական ծառայության մշտական բնակություն հաստատած վերջին պետությունում՝ միայն որպես պահեստային զինծառայող:

6. Երկու պետություններից մեկում զորահավաք հայտարարելիս այդ պետություններն ազատվում են թվարկված դրույթների կատարումից:

1997թ. Եվրոպական կոնվենցիան, միաժամանակ, կարգավորում է երկքաղաքացիների զինապարտության խնդիրները [6]: Համաձայն կոնվենցիայի 7-րդ գլխի, երկքաղաքացի անձը զինապարտության իր պարտականությունը պետք է կրի միայն մեկ երկրում կամ այն երկրում, որում բնակվում է, կամ իր ցանկությամբ այն երկրում, որում չի բնակվում, սակայն որի քաղաքացին է հանդիսանում նա:

Պատերազմական գործողությունների մեջ գտնվող պետությունների երկքաղաքացիներին երկու պետությունների հանդեպ թշնամի չդարձնելու նպատակահարմարությունից ելնելով՝ երկքաղաքացին պետք է զորակոչվի այն պետության զինված ուժերի շարքում, որտեղ մշտապես բնակվում է: Չնայած այս դրույթներին, պետք է նշել, որ միջազգային պրակտիկան այս հարցի առնչությամբ գրեթե կարգավորված չէ, միայն կարելի է վկայակոչել 1949թ. Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները, որոնք ևս մասամբ են լուծում առաջացած հիմնախնդիրները:

Ամփոփելով՝ նշենք, որ այն երկքաղաքացիները, որոնք իրենց զինվորական պարտականությունը կրել են որևէ պետությունում, չպետք է կրկնակի զինապարտություն կրեն ՀՀ-ում, այսինքն՝ բացի մեկ պետությունից, երկրորդ պետությունում երկքաղաքացին չպետք է զինվորական պարտականություն կրի: Ընդ որում՝ այն անձանց համար, ովքեր հանդիսանում են ՀՀ քաղաքացիներ և դիմում են այլ երկրի քաղաքացիություն ստանալու համար, զինվորական ծառայությունը ՀՀ-ում պարտադիր է:

Ինչ վերաբերում է ընտրական իրավունքի իրացմանը, ապա հարկ է նշել, որ այդ իրավունքից երկքաղաքացիները կօգտվեն ՀՀ-ում՝ առավելապես և անընդմեջ բնակություն հաստատելուց հետո: Ինչպես վկայում է այս հարցի շուրջ իրավական կարգավորման միջազգային պրակտիկան, պետք է նշել, որ ոչ միայն երկքաղաքացիներին, այլև օտարերկրացիներին թույլատրվում է օգտվել իրենց քաղաքական իրավունքներից՝ որոշակի սահմանափակումներով, ինչն իրավաչափ է դիտվում միջազգային հանրության կողմից. օրինակ՝ մասնակցել միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը, այն էլ՝ երկքաղաքացիություն տրամադրող պետությունում որոշակի ժամանակ բնակություն հաստատելուց հետո:

Այն դեպքում, երբ երկքաղաքացիները հրաժարվում են բնակության

երկրի նկատմամբ իրենց չեզոքությունից, ապա այդ դեպքում ընտրական իրավունքներից զրկելը հանդիսանում է յուրաքանչյուր պետության պաշտպանության բնական միջոց:

Որոշ պետություններում երկքաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ գործում են որոշակի սահմանափակումներ ոչ միայն ընտրովի, այլև նշանակովի պաշտոններ զբաղեցնելու հարցում:

ՀՀ վերափոխված Սահմանադրության համաձայն՝ որևէ արգելք չի գործում ընտրելու իրավունքի հետ կապված, ուստի և ՀՀ-ում երկքաղաքացիություն ստացած անձինք չեն կարող չիրացնել իրենց ընտրելու իրավունքի հնարավորությունը: Տարբերակներից մեկն է նաև ՀՀ Ընտրական օրենսգրքում համապետական ընտրությունները միայն ՀՀ տարածքում անցկացնելու մասին դրույթի ամրագրումը:

Երկքաղաքացիների հարկային պարտավորությունների հետ կապված հարցերը ենթակա են կարգավորման միջազգային պայմանագրերով: Այստեղ առանցքայինն այն է, որպեսզի երկքաղաքացների կրկնակի հարկումը բացառվի երկկողմ միջպետական համաձայնագրի միջոցով (կրկնակի հարկումից խուսափելու և եկամտահարկի հարկումից խուսափելու կանխման մասին) և կիրառվի արդյունավետ քաղաքացիությունը, այսինքն՝ հարկերի, տուրքերի և այլ վճարումների կատարումն իրականացվի այն պետությունում, որտեղ այդ անձինք առավելապես և անընդմեջ կամ մշտապես բնակվում են, կամ որտեղ ակտիվորեն ծավալում են իրենց գործունեությունը, կամ որտեղ գտնվում է նրանց եկամտի աղբյուրների վայրը:

Պետությունների միջև կրկնակի հարկման հետ կապված համաձայնագրի բացակայության դեպքում գործում է այն սկզբունքը, համաձայն որի՝ երկքաղաքացին հարկվում է այն վայրում, որտեղ գտնվում է նրա սեփականության գերակշիռ մասը:

Երկու կամ ավելի պետությունների քաղաքացիություն ունենալու իրավունքը, ինչպես և այլ իրավունքները, կարող են սահմանափակվել ժողովրդավարական հասարակությունում՝ այդ իրավունքի չարաշահման (շահագործման) կամ ՀՀ անվտանգությանը սպառնալու դեպքերում:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք ուղղված կլինեն երկքաղաքացիների ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող հարցերի կարգավորմանը: Փաստենք հետևյալ երկու կարևոր հիմնադրույթները.

ա. Այն դեպքում, երբ անձը ամուսնական հարաբերությունների մեջ կմտնի ՀՀ քաղաքացու(ուհու) հետ, պետք է ՀՀ քաղաքացիություն ստանա պարզեցված կարգով:

բ. Երկքաղաքացիների ամուսնալուծության հետ կապված հարցերը

ենթակա են լուծման այն պետության օրենսդրության համաձայն, որտեղ ամուսինները մշտապես բնակվել են վերջին հինգ տարիների ընթացքում:

Երկքաղաքացիների երեխաների քաղաքացիության հարցերը որոշվում են 1977թ. ԵԽ շրջանակներում ընդունված բանաձևերով (տարբեր քաղաքացիություններ ունեցող ամուսինների քաղաքացիության և նման ամուսնություններից ծնված երեխաների քաղաքացիության վերաբերյալ բանաձևեր): Երկքաղաքացիներից ծնված երեխաների քաղաքացիության հարցը կարգավորվում է ծնողների համաձայնությամբ: Վերջիններիս միջև համաձայնության բացակայության դեպքում երեխայի քաղաքացիության հարցը կարգավորվում է նրա կամահայտնությամբ՝ չափահաս դառնալու պահից:

Երկքաղաքացիների դիվանագիտական պաշտպանության հարցերը ենթակա են կարգավորման բազմակողմ կամ երկկողմ համաձայնագրերով: Այնուամենայնիվ, օրենքում անհրաժեշտ է ամրագրել այնպիսի դրույթ, համաձայն որի՝ երկքաղաքացին պետք է գտնվի մեկ պետության դիվանագիտական պաշտպանության ներքո: Երկքաղաքացին, որը գտնվում է երրորդ պետության տարածքում, և անհրաժեշտ է այդ երկքաղաքացուն ցուցաբերել դիվանագիտական պաշտպանություն, ապա երրորդ պետությունը հաշվի է առնում երկքաղաքացու՝ այն պետության կողմից դիվանագիտական պաշտպանության հնարավորությունը, որի հետ երկքաղաքացին առավել ամուր փաստական կապեր ունի: Այստեղ գործում է արդյունավետ քաղաքացիության սկզբունքը:

Երկքաղաքացիների դատական պաշտպանության իրավունքի իրացման առնչությամբ կարելի է վկայակոչել միջազգային, դատական մարմինների կամ արբիտրաժների կողմից երկքաղաքացիության հարցերի քննարկման փորձը, սակայն դրանք վերաբերում են առանձին դեպքերի, իսկ ընդհանուր իրավական և օրենսդրական սկզբունքներ չեն մշակվել: Այս համատեքստում ներպետական օրենսդրության առումով նույնպես ողջամիտ է կիրառել արդյունավետ քաղաքացիության սկզբունքը, որը ենթադրում է բնակության ցենզի առկայությունը:

Քաղաքացիության ինստիտուտի զարգացումները հանգեցնում են նրան, որ գլոբալացման պայմաններում բոլոր պետությունները ձգտում են «աշխարհի քաղաքացի» հասկացության ներդրմանն ու շրջանառմանը: Այս առումով ուշագրավ է նաև Եվրամիության քաղաքացիության ինստիտուտը, որը նախատեսված է Մաաստրիխտի պայմանագրով, ինչպես նաև Եվրամիության չընդունված Սահմանադրությամբ և այլն: ԵՄ քաղաքացիությունը հնարավորություն կընձեռի Եվրոպայի քաղաքացիներին ավելի լայնորեն իրացնել իրենց իրավունքներն ու հիմնական ազատությունները:

Այսպիսով, կատարված հետազոտությունների հիման վրա կարելի է եզրակացնել.

1. Միջազգային իրավական ակտերի և այլ պետությունների օրենսդրության համաձայն՝ երկքաղաքացիություն կամ բազմաքաղաքացիություն առաջանում է այն դեպքով, երբ մեկ երկրի քաղաքացին, առանց դուրս գալու այդ երկրի քաղաքացիությունից, ձեռք է բերում այլ՝ մեկ կամ մի քանի երկրների քաղաքացիություն: Երկքաղաքացիության դեպքում երկրորդ և հաջորդ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը երկքաղաքացիություն ձեռք բերած երկրի տարածքում պետք է ունենա տվյալ երկրի մյուս քաղաքացիների համար նախատեսված բոլոր իրավունքները և կրի բոլոր պարտականությունները: Սույն պահանջը բխում է թե՛ Քաղաքացիության մասին Եվրոպական կոնվենցիայի պահանջներից, որում ուղղակի այդ մասին նշվում է և թե՛, մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրության պահանջներից, որով չի նախատեսվում, որ օրենքով կամ այլ իրավական ակտերով ՀՀ քաղաքացիների միջև՝ ելնելով քաղաքացիություն ձեռք բերելու ձևից, կարող են կիրառվել խտրականություններ: Վերոգրյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիություն ստացած՝ այլ երկրի քաղաքացիությունը չկորցրած անձը ՀՀ տարածքում պետք է օգտվի ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքներից, այդ թվում՝ ընտրվելու ու ընտրելու իրավունքից ու պետք է կրի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականությունները, այդ թվում՝ զինապարտության պարտականությունը:

2. Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երկքաղաքացության վերաբերյալ աշխարհում իրենց տարատեսակներով հանդերձ հիմնականում կան երեք սկզբունքներ.

ա. Երկքաղաքացիության չճանաչում: Այս սկզբունքը կիրառող պետությունները ոչ միայն թույլ չեն տալիս, որ այլ երկրի քաղաքացին, առանց քաղաքացիությունից դուրս գալու, դառնա իրենց երկրի քաղաքացի, այլ նաև չեն ընդունում այն դեպքերը, երբ իրենց երկրի քաղաքացին, անկախ իր կամքից (ամուսնություն, ծնունդ և այլն), ստանում է այլ երկրի քաղաքացիություն: Նման երկրներից են Վրաստանը, Հնդկաստանը, մինչև Սահմանադրության փոփոխությունների ընդունումը՝ նաև Հայաստանը:

բ. Երկքաղաքացիության ճանաչում: Այս սկզբունքի էությունն այն է, որ այլ երկրի քաղաքացուն նաև իր երկրի քաղաքացիություն տված պետությունն իր երկրի տարածքում ճանաչում է նաև այդ անձի՝ այլ երկքաղաքացու համար նախատեսված իրավունքները: Այսպես, ընդունելով իր երկրի քաղաքացիության մեջ՝ պետությունը, հիմք ընդունելով, որ նա նաև այլ երկրի քաղաքացի է, կարող է տվյալ անձից չպահանջել կատարել զինապարտության պարտականությունները և հանցագործության կատարման դեպքում, որպես այլ երկրի քաղաքացի, հանձել այլ երկրի, տալ իր երկրի տարածքում նաև միայն այլ քաղաքացու համար նախատեսված երաշխիք-

ներ և այլն: Երկքաղաքացիության ճանաչման սկզբունքը կիրառվում է միայն միջպետական պայմանագրերում: Հակառակ պարագայում, մի երկրի կողմից սահմանված կանոնները կարող են չճանաչվել այլ երկրի կողմից: Բացի այդ, հնարավոր չէ միակողմանիորեն հստակ սահմանել երկքաղաքացու՝ երկու պետությունների իրավունքները կամ պարտականություններից օգտվելու սկզբունքները: Այս սկզբունքի միակողմանի կիրառման դեպքում երկքաղաքացին տվյալ երկրի այլ քաղաքացիների հանդեպ արտոնյալ վիճակում է գտնվում և ունենում է երկու երկրների քաղաքացիների համար նախատեսված իրավունքներ: Այս սկզբունքով պայմանագրեր կնքվել են հիմնականում Լատինական Ամերիկայի մի շարք երկրների միջև:

գ. Հանդուրժողականության սկզբունք: Այս սկզբունքի համաձայն՝ քաղաքացիության մեջ ընդունող պետությունը հաշվի չի առնում տվյալ անձի՝ այլ պետության քաղաքացի լինելու հանգամանքը և չի պահանջում, որ տվյալ անձը պարտադիր կերպով դուրս գա իր երկրի քաղաքացիությունից: Միաժամանակ, այս սկզբունքն ընդունող երկրները կամ չեն պահանջում, որ իրենց քաղաքացիներն այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում դուրս գան քաղաքացիությունից, կամ հանդուրժում են, որ իրենց երկրի քաղաքացին, անկախ իր կամքից, ստանա այլ երկրի քաղաքացիություն: Սակայն այս սկզբունքն ընդունող բոլոր երկրները կիրառում են մեկ էական պայման, որ իրենց երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձն իրենց երկրի տարածքում ճանաչվում է միայն այդ երկրի քաղաքացի: Միաժամանակ, տվյալ երկրի այն քաղաքացին, որ ձեռք է բերել կամ ստացել այլ երկրի քաղաքացիություն, տվյալ երկրի տարածքում ճանաչվում է միայն տվյալ երկրի քաղաքացի:

Առանձին երկրներ, հանդուրժման սկզբունքով այլ երկրի քաղաքացուն իրենց երկրի քաղաքացիություն տալու համար պահանջում են, որ տվյալ անձը գրավոր հրաժարվի իր նախկին երկրի քաղաքացիությունից: Սակայն այդ հրաժարականը հիմնականում հիմք չի հանդիսանում, որ տվյալ անձն ինքնաբերաբար կորցնի իր նախկին երկրի քաղաքացիությունը:

Այս սկզբունքը տարբեր տարատեսակներով կիրառում են բոլոր այն երկրները, որոնք չեն կիրառում երկքաղաքացիությունը չճանաչելու սկզբունքը: Մասնավորապես, այս սկզբունքը կիրառում են Գերմանիան, Ֆրանսիան, Իսրայելը, Ռուսաստանի Դաշնությունը, Ավստրալիան, Կանադան, ԱՄՆ-ը և այլ երկրներ:

Չի բացառվում, որ ՀՀ քաղաքացիներ հանդիսացող շատ անձինք այս սկզբունքի համաձայն՝ դարձած լինեն նաև այլ երկրների քաղաքացիներ:

3. Աճող միգրացիայի պայմաններում ֆիզիկական անձի և պետության փոխադարձ իրավունքների ու պարտականությունների համակցությամբ քաղաքացիությունը ներկայացնում է անհատի ակտիվ մասնակցությունը հասարակության կյանքին: Մի շարք պատճառներով, այդ թվում նաև տարբեր պետությունների քաղաքացիության ձեռքբերման և կորստի մասին նորմերի բախման հետևանքով առաջանում է երկքաղաքացիության ինստիտուտը: Քաղաքացիության մասին ազգային օրենքների միջև տարբերության ուժով մարդն արդեն ծնվելիս կարող է ձեռք բերել երկու և ավելի պետությունների քաղաքացիություն: Մի քանի պետության քաղաքացիություն ունեցող անձն այդ պետություններից յուրաքանչյուրի կողմից դիտվում է որպես միայն իր քաղաքացի: Դրանից բխում է, որ եթե անձը գտնվում է այն պետություններից որևէ մեկի տարածքում, որոնց քաղաքացիությունը նա ունի, ապա մյուս պետությունները պետք է նրան դիվանագիտական պաշտպանություն ընձեռեն: Երրորդ պետության, այսինքն՝ այն պետության տարածքում գտնվող անձը, որի քաղաքացին չէ նա, մի քանի քաղաքացիություն ունենալու դեպքում դիտվում է որպես դրանցից մեկն ունեցող: Երրորդ պետությունը ղեկավարվում է արդյունավետ քաղաքացիության կանոնով, որի համաձայն՝ հաշվի է առնվում այն պետության քաղաքացիությունը, որտեղ անձը մշտապես բնակվում է: Եթե դա դժվար է որոշել, ապա ճանաչվում է այն պետության քաղաքացիությունը, որի հետ քաղաքացին փաստացի առավելապես կապված է:

4. Երկքաղաքացիությունը որոշակի անհատի որակը չէ, այլ ներկայացնում է նրա կարգավիճակի արհեստական շինություն, որն արտահայտվում է քաղաքացիության միջոցով և որը նա ստանում է երկու կամ ավելի պետություններից: Որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից կախված՝ երկքաղաքացիությունը դիտարկվում է որպես մարդու իրավունքների հատկանիշներից մեկը:

Երկքաղաքացիության վիճակը տարբեր բարդություններ է առաջացնում տարբեր պետությունների ներպետական իրավունքում: Երկքաղաքացիության հարցերի լուծումն առաջացնում է նոր պրոբլեմներ, ինչպես անմիջապես երկքաղաքացու, այնպես էլ այն պետությունների համար, որոնց քաղաքացիությունը նա ունի: Օրինակ, երկքաղաքացիների համար հատուկ նշանակություն ունի զինապարտության հիմնահարցի լուծումը: Զինվորական ծառայության անցնելը պարտադիր է միայն մշտական բնակության կամ, այսպես կոչված՝ «արդյունավետ կապի» պետությունում:

5. Մեր կարծիքով, երկքաղաքացիության մասին օրենսդրության հե-

տագա կատարելագործման և զարգացման հիմքում պետք է ընդունվեն հետևյալ սկզբունքները. ապահովել, որ, հնարավորինս քիչ ՀՀ քաղաքացիներ դուրս գան ՀՀ քաղաքացիությունից, պահպանել առանց ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու և այլ երկրների քաղաքացիություն ձեռք բերած ՀՀ քաղաքացու քաղաքացիությունը, հնարավորություն ընձեռել օտարերկրյա քաղաքացիներին, առանց իրենց քաղաքացիությունից դուրս գալու, ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, որն, առաջին հերթին, կնպաստի հայապահպանությանն ու Սփյուռքում ապրող հայերի ու ՀՀ-ի միջև ինտեգրմանը, ՀՀ հասարակական-քաղաքական կյանքին մասնակցությանը, երկքաղաքացիության ինստիտուտը չպետք է վնասի ՀՀ ազգային անվտանգությանը կամ խոչընդոտներ ստեղծի պաշտպանության ամրապնդմանը, պետք է ապահովվեն ՀՀ բոլոր քաղաքացիների իրավահավասարության սահմանադրական սկզբունքները:

6. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

7. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին պարտավոր է Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում հանդես գալ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Մայիս, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Թորոսյան Թ.,* Երկքաղաքացիության ինստիտուտը և դրան առնչվող հիմնահարցերը, «Օրենք և իրականություն», №15-17, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2004:
2. ՀՀ Սահմանադրություն, 1995թ.:
3. ՀՀ Սահմանադրություն, փոփոխություններ, 2005թ.:
4. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը փոփոխություններով և լրացումներով, 2007:
5. «Օտարերկրացիների իրավական դրության մասին» ՀՀ օրենքը, 1995թ.:
6. Քաղաքացիության մասին Եվրոպական կոնվենցիան, Ստրասբուրգ, 1997 թվականի նոյեմբերի 6:

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ДВОЙНОГО ГРАЖДАНСТВА

Тамара Торосян

Резюме

Уже в последнее десятилетие 20 и в начале 21 века наметился значительный прогресс института гражданства, который сочетается с формированием нового вида совместного гражданства Европейского Союза, РФ и Белорусского Союза. Для выявления позитивных и негативных сторон двойного гражданства, а также их полноценного осмысления и оценки нужен всесторонний анализ таких проблем двойного гражданства, как терпимость, безопасность, дипломатическое и консульское покровительство, военная служба, налоговые платежи и т.д.

Формирование в обществе четкого представления об институте двойного гражданства, его осмысление и оценка, а также адекватное решение связанных с ним задач предполагают комплексное исследование этого института.

Все вышеупомянутое определяет выбор данной темы и ее актуальность.